



Tempus



Գիտելիք. Պատմել, ցուցադրել, թվարկել, տեղադրել, կրկնել, սահմանել, բացատրել, քննել, մտաբերել, անվանել, ցույց տալ և այլն:

Օրինակ (Երևանի պետական Լեզվաբանական համալսարան, "Որակի կառավարում և գնահատում" դասընթաց). Առարկան ուսումնասիրելուց հետո ուսանողը.

- կկարողանա ԹՎԱՐԿԵԼ որակի ապահովման գործում ներդրում ունեցած հիմնական հեղինակություններին
- կկարողանա ՄԱՀՄԱՆԵԼ որակի մշակույթի հիմնական հասկացությունները, ԲԱՑԱՏՐԵԼ որակի մշակույթի առաջացման պատմությունը,
- կկարողանա ԲԱՑԱՏՐԵԼ որակի ֆորմալացումը կրթության ոլորտում, ՆԿԱՐԱԳՐԵԼ որակի մասսայականացումը, փոխձանաչման գործընթացները և դրանց տրամաբանությունը, ինչպես նաև որակի կարևորությունը գլոբալացման ու ինտեգրացման համատեքստում

Ընկալում. Հանրագումարել, համեմատել, փորձարկել, տարրական գուգահեռներ տանել, ցուցադրել, բացատրել, վերաձևակերպել, քննարկել:

Օրինակ (Երևանի պետական Լեզվաբանական համալսարան, "Որակի կառավարում և գնահատում" դասընթաց). Առարկան ուսումնասիրելուց հետո ուսանողը.

- ուսանողը կկարողանա ուսումնասիրված տեսությունները բացատրող մեթոդներն ու մոտեցումները ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊԵԼ (ԸՆԿԱԼՈՒՄ), մասնավորապես (TQM) որակի ամբողջական կառավարման տեսությունը:

Կիրառել. Փորձել, դիագրամ կառուցել, կատարել, գրաֆիկներ կառուցել, գործողությունների վերաձել, կառուցել, զեկուցել, կիրառել, կիրառական համեմատություն անել, կիրառությունից հետևություն անել, տարրերը իրար հետ համադրել, հարմարեցնել:

Օրինակ (Երևանի պետական Լեզվաբանական համալսարան, "Որակի կառավարում և գնահատում" դասընթաց). Առարկան ուսումնասիրելուց հետո ուսանողը.

- հետազոտական աշխատանքի միջոցով ԿՄՇԱԿԻ փորձարարական հետազոտության նախագիծ, տվյալների հավաքագրման արդյունքում կառաջարկի ԿԻԲԱՌԵԼ ուսումնասիրված գործիքներից կամ մեթոդներից մեկը և ԿՀԻՄՆԱՎՈՐԻ այդ գործիքի կամ մեթոդի կիրառման նպատակահարմարությունը
- կկարողանա հետազոտական աշխատանքի ՆԱԽԱԳԾՄԱՆ միջոցով ինքնուրույն աշխատանքի ու ժամանակի կառավարման հմտությունները էլ ավելի խորացնել
- կկարողանա հետազոտական աշխատանքի ՆԱԽԱԳԾՄԱՆ միջոցով ինքնուսանողը կկարողանա ՁԵԿՈՒՑԵԼ հետազոտական աշխատանքի միջոցով մշակված փորձարարական հետազոտության նախագիծ:

Վերլուծել. Ուսումնասիրել, միավորել, տարանջատել, դասակարգել, հայտնաբերել, գննել, ուսումնասիրել, տարբերակել, մասերի բաժանել, ընդհանրացնել, համեմատել, վերլուծել:

Օրինակ (Երևանի պետական Լեզվաբանական համալսարան, "Որակի կառավարում և գնահատում" դասընթաց). Առարկան ուսումնասիրելուց հետո ուսանողը.

- ուսանողը կկարողանա ԹՎԵՆՔԻ համալսարանի օրինակով ՄԵԿՆԱԲԱՆԵԼ գնահատման ու հավատարմագրման եվրոպական համակարգը, Գրոնինգենի համալսարանի օրինակի ուսումնասիրության արդյունքում որակի մշակույթի ստեղծման նպատակով ՁԵՎԱԿԵՐՊԵԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՊԼՀ-ի համար, ՀԱՄԵՄԱՏԵԼ Բոլոնիայի համալսարանի կրթական ծրագրերի գնահատման փորձը ԵՊԼՀ-ի գնահատման փորձի հետ
- ուսանողը կկարողանա կիրառական գիտելիքներ ունենալ որակի ամբողջական կառավարման մասին, ՀԱՄԵՄԱՏԵԼ որակի ամբողջական կառավարման գործիքները (tools of TQM)
- ուսանողը կկարողանա ՀԱՄԵՄԱՏԵԼ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԵԼ թիմային աշխատանքի կարևորությունը կրթության ոլորտում, գիտելիքի կառավարումը, բենչմարքինգը, կրթության գնահատման կարևորությունը, բյուջեի համակցումը որակի ամբողջական կառավարմանը, ռազմավարական որակի կառավարումը և ինքնագնահատումը,

- ուսանողը ծանոթանալով որակի կառավարման սկզբունքների հետ կկարողանա ՈԻՍՈԻՄՆԱՍԻՐԵԼ կատարողականի գնահատման ցուցանիշները (performance indicators)

Համադրել. Առաջադրել թեզ, կանխատեսել, ստղծել, արտադրել, մոդիֆիկացնել, ընդլայնել, նախագծել, ձևակերպել, մշակել, կառուցել, համադրել և այլն:

Օրինակ (Երևանի պետական Լեզվաբանական համալսարան, "Որակի կառավարում և գնահատում" դասընթաց). Առարկան ուսումնասիրելուց հետո ուսանողը.

- ուսանողը ծանոթանալով որակի կառավարման սկզբունքների հետ կկարողանա ՆԱԽԱԳԾԵԼ ԵՊԼՀ-ի կատարողականի գնահատման ցուցանիշները (performance indicators)

Գնահատում. Մեկնաբանել, հիմնավորել, որոշել, քննադատել, դատողություններ անել, լուծել և այլն:

Օրինակ (Երևանի պետական Լեզվաբանական համալսարան, "Որակի կառավարում և գնահատում" դասընթաց). Առարկան ուսումնասիրելուց հետո ուսանողը.

- կկարողանա ՄԵԿՆԱԲԱՆԵԼ (the theory of culture specific TQM) որակի ամբողջական կառավարման կիրառման տարբերակումը պայմանավորված մշակութային առանձնահատկություններով՝ ծանոթանալով Չինաստանի օրինակի հետ
- կկարողանա ՄԵԿՆԱԲԱՆԵԼ արտագրության ու գրագրության վնասակար ազդեցությունը;
- կկարողանա ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ՏՄԼ ցկյանս կրթության կարևորությանը՝ ինքնուրույն աշխատանքի ու անհատական աշխատանքի միջոցով

Առաջադրանք 1.

Բլումի կրթական նպատակների տաքսոնոմիային համապատասխան վերաձևակերպել սեփական դասընթացի կրթական վերջնարդյունքները (ներկայացնել մեկից երկու վերջնարդյունք յուրաքանչյուր մակարդակի համար):

